**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «23-ը» փետրվարի 2018թ.

ժամը $11^{00}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Արալպլաստ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի.

«Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 5, 5.1 և 5.2 հավելվածները չեն համապատասխանում հրավերի 8.19 կետի պահանջներին, մասնավորապես՝ դրանք չեն պարունակում թվային էլեկտրոնային ստորագրություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի(ների) կողմից ներկայացվելիք շտկումների քննարկման վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Ս. Աբովյան |
| **Գնահատող** | Մ. Խալաթյան |
| **Գնահատող** | Հ. Բաղալյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Ռ. Մարդոյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 26-ը» փետրվարի 2018թ.
ժամը $10^{00}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1. «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկամ և ընտրված մասնակիցներին որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**«Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթի քննարկամ և ընտրված մասնակիցներին որոշման մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը դրանք գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Արալպլաստ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից այն չափաբաժիններում, որտեղ նա ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնողմասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Ս. Աբովյան |
| **Գնահատող** | Մ. Խալաթյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնահատող** | Հ. Բադալյան |
| **Գնումները համակարգող՝** | Ռ. Մարդոյան |